Ամսոյս 10-ին ի Տէր հանգեաւ ԹԱԴԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆԱԿԱՆ, Անդամ Ս Սինոդի Ս. Էջմիածնի 66 ամաց հասակում. և հետևեալ օրը թաղեցաւ հանդիսաւոր կերպով Մայր Աթոռոյ միաբանից գերեզմանատան մէջ։

Հանգուցեալը իւր ուսումը և դաստիարակութիւնը ստացած էր Մայր Աթոռի Ժառանգաւորաց դպրոցում 1836-ից մինչև 46 թ. ձեռնադրուեց Սարգսակ երջանկայիշատակ հանգուցեալ Ներսէս Ե. Կաթուղիկոսից։ 1852 թ. նոյն Հայրապետի կարգադրութեամբ նշանակուեց Հայոց լեզուի ուսուցիչ Ժառանգաւորաց դպրոցում։ 1856 թ. վարդապետ ձեռնադրուեց Մակար Արքեպիսկոպոսից (ներկայ Վեհ. Կաթուղիկոս) և նշանակուեց գրականութեան ուսուցիչ նոյն դպրոցի բարձր դասարանում։ 1859 թ. ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Մատթէոս Կաթուղիկոսից վարձատրուեց վարդապետական լանջական խաչիւ և ծաղկեայ փիլոնիւ, իւր հաւատարիմ և եռանդուն ծառայութեան համար։

1864 թ. առաջարկութեամբ նոյն հանգուցեալ Հայրապետի հաստատուեց անդամ Ս. Սինոդի Ս. Էջմիածնի։

1868 թ. ձեռնադրուեց Եպիսկոպոս ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսից, և նոյն թուականին վարձատրեցաւ պնակէով։ 1870 թ. արձակուելով Ս. Սինոդի անդամութիւնից կարգուեց 1872 թ. Ախալցխայի փոխանորդ առաջնորդութեան, իսկ 1876 թ. Ս. Սինոդի կարգադրութեամբ նշանակուեց ժամանակաւոր կառավարիչ Շամախոյ թեմի, և 1885 թ. ներկայ Վեհ. Հայրապետից ստացաւ Արքեպիսկոպոսութիւն։ Իսկ 1886 թ. առաջարկութեամբ Վեհ. Հայրապետի Ազգիս հաստատուեց անդամ Ս. Սինոդի զոր և վարեց մինչև ցկեա մահուան իւրոյ։

Հանգուցեալը իւր համեստ վարքով հաւատարիմ և ջերմեռանդ ծառայութեամբը սիրելի էր Վեհ. Հայրապետաց և միաբանութեանս, ուստի և նորա անակնկալ մահը ոչ սակաւ տրտմութիւն և ցաւ պատճառեց ամենքին.

Տէր լուսաւորեսցէ զՀոգի Հանգուցելոյն, և դասեսցէ ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր, ամէն։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.